

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) հակակոռուպցիոն կռալիցիան (այսուհետև՝ Կռալիցիա) ձևավորվել և գործում է հակակոռուպցիոն արժեքների ընդհանրության, կամավորության, հավասարության, ինքնուրույնության, թափանցիկության, հաշվետվողականության և կառավարման կոլեգիալության սկզբունքների հիման վրա:

1.2. Կռալիցիան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ոչ ֆորմալ կազմավորում է և գործում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, սույն աշխատակարգին, ինչպես նաև Կռալիցիայի անդամ կազմակերպությունների հիմնադիր ժողովի ժամանակ ընդունված Հռչակագրին համապատասխան:

2. ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կռալիցիայի նպատակներն են.

ա) Բարձրացնել ՔՀԿ-ների կողմից կառավարության հակակոռուպցիոն բարեփոխումների նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը:

բ) Նպաստել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդմանը և զարգացմանը:

գ) Նպաստել հասարակության հակակոռուպցիոն ընկալման և իրազեկության մակարդակի բարձրացմանը, կոռուպցիայի գոհ դարձած քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը:

դ) Ամրապնդել մոնիթորինգի, հանրային վերահսկողություն իրականացնելու և հակակոռուպցիոն գործունեության իրականացման հետ կապված ՔՀԿ-ների կարողությունները:

2.2. Կռալիցիայի խնդիրներն են.

ա) Իրականացնել ՀՀ կառավարության ծրագրի, 2012-2016 թվականների արդարադատության ոլորտի բարեփոխումների ռազմավարության, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության, և Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարավորությունների կատարման մոնիթորինգը, դրանց արդյունքները հանրայնացնել և արդյունքերից բխող առաջարկություններ ներկայացնել պատկան մարմիններին:

բ) Ստեղծել Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմները ամրապնդելու վերաբերյալ ՔՀԿ-Կառավարություն կայուն երկխոսություն՝ ուշադրության կենտրոնում պահելով Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի անկախ մարմին ստեղծելու և ապօրինի հարստացման քրեականացման հարցերի վերաբերյալ:

գ) Մշակել և իրականացնել ծրագրեր՝ ուղղված հասարակության հակակոռուպցիոն ընկալման և իրազեկության մակարդակի բարձրացմանը, հակակոռուպցիոն պայքարում հասարակության մասնակցությանը և կոռուպցիայի գոհերի իրավունքների պաշտպանությանը:

դ) ՔՀԿ-ների մոնիթորինգի, հանրային վերահսկողություն իրականացնելու և հակակոռուպցիոն գործունեության իրականացման հետ կապված կարողությունները ամրապնդելու նպատակով կազմակերպել սեմինարներ, ուսուցումներ և այլ միջոցառումներ:

ե) Զարգացնել Կոալիցիայում ներգրավված կազմակերպությունների միջև համագործակցությունը:

զ) Համագործակցել ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների, այդ թվում ՄԱԿ-ի Կոոպերացիայի դեմոկրատիկ կոալիցիայի կոալիցիայի հետ,

է) Կազմակերպել սեմինարներ, կլոր սեղաններ, դասընթացներ, հանդիպումներ, քննարկումներ, մրցանակաբաշխություն, իրականացնել հակակոռուպցիոն ոլորտի զարգացմանն ուղղված այլ աշխատանքներ:

3. ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԱՆՂԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՂԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Կոալիցիայի անդամ կարող են լինել քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունները, ներառյալ հասարակական շարժումներն ու նախաձեռնությունները, որոնք միանում են Կոալիցիայի Հռչակագրին և ընդունում են սույն Աշխատակարգը:

3.2. Կոալիցիային անդամագրվելու կարգը սահմանվում է Կոալիցիայի անդամների համաժողովի կողմից:

3.3. Կոալիցիայի անդամն իրավունք ունի՝

- իր ներկայացուցիչների միջոցով մասնակցել Կոալիցիայի կառավարմանը,
- Կոալիցիայի գործունեության վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր,
- նախաձեռնել ծրագրեր՝ ուղղված Կոալիցիայի զարգացմանը,
- անարգել դուրս գալ Կոալիցիայի անդամությունից:

3.4. Կոալիցիայի անդամը պարտավոր է.

- բարձր պահել և տարածել հակակոռուպցիոն արժեքները,
- մասնակցել Կոալիցիայի աշխատանքներին և կազմակերպած միջոցառումներին,
- նպաստել Կոալիցիայի զարգացմանը,
- իր գործունեությամբ նպաստել հասարակության հակակոռուպցիոն ընկալման և իրազեկության մակարդակի բարձրացմանը, հակակոռուպցիոն պայքարում հասարակության մասնակցությանը և կոռուպցիայի գոհերի իրավունքների պաշտպանությանը:

3.5. Կոալիցիայի անդամը ցանկացած ժամանակ կարող է կամավոր դուրս գալ Կոալիցիայի անդամությունից: Անդամը կարող է հեռացվել Կոալիցիայից՝ անդամների Համաժողովի կողմից սահմանված դեպքերում և կարգով:

3.6. Կոալիցիայի անդամը պատասխանատվություն չի կրում Կոալիցիայի կամ դրա անդամ այլ կազմակերպությունների պարտավորությունների համար, ինչպես և Կոալիցիան պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար:

4. ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Կոալիցիայի բարձրագույն կառավարման մարմինը անդամ կազմակերպությունների համաժողովն է:

4.2. Համաժողովը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարին երկու անգամ:

4.3. Համաժողովը կարող է նիստեր գումարել և որոշումներ կայացնել, եթե մասնակցում են Համաժողովի անդամների առնվազն կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են

Համաժողովի նիստին ներկա մասնակիցների ձայների 2/3-ով: Համաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել նաև կապի միջոցներով՝ խորհրդի անդամների բանավոր կամ գրավոր հարցման ձևով:

4.4. Համաժողովի որոշմամբ կարող են ստեղծվել Կոալիցիայի տարբեր մարմիններ, աշխատանքային և տարածքային հանձնախմբեր և/կամ այլ կառույցներ:

4.5. Մինչև Կոալիցիայի կազմակերպական մարմինների և կառուցակարգերի ամբողջական ձևավորումը Կոալիցիայի քարտուղարության իրավասությունները, սույն աշխատակարգի համաձայն, դրվում են Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի վրա, որը.

ա) ապահովում է Կոալիցիայի մարմինների աշխատանքների բնականոն ընթացքը և թափանցիկությունը,

բ) համակարգում է Կոալիցիայի կազմակերպչական աշխատանքները, այդ թվում Կոալիցիան ներկայացնում է երրորդ անձանց հետ հարաբերություններում, Կոալիցիայի անունից իրավասու մարմիններին և կազմակերպություններին ներկայացնում է Կոալիցիայի կոմից պատրաստված առաջարկները և այլ փաստաթղթերը,

գ) համակարգում է Կոալիցիայի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ դրամական միջոցների հայթայթման աշխատանքները:

5. ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5.1. Կոալիցիան չունի առանձնացված գույք:

5.2. Կոալիցիայի միջոցները գոյանում են օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

5.3. Կոալիցիայի միջոցները Կոալիցիայի Համաժողովի որոշմամբ՝ ներգրավվում են Կոալիցիայի անդամ կազմակերպության (ների) միջոցով, իսկ ներգրավված միջոցները օգտագործվում են բացառապես Կոալիցիայի նպատակների և խնդիրների իրականացման համար:

6. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Կոալիցիան կարող է դադարել համաժողովի որոշմամբ, եթե այդ որոշմանը կողմ է Համաժողովի անդամների ընդհանուր թվի 2/3-ը:

6.2. Կոալիցիայի դադարումը անդամ կազմակերպությունների համար պարտավորություններ չի առաջացնում:

Հաստատված է

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամների հիմնադիր ժողովի կողմից

28 նոյեմբերի 2014թ.